Ը. ՏԱՐԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ 18 ՅՈՒՆՈՒԱՐ 1906 ԹԻՒ 783

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պուլկարիոյ համար
տարեկան 12 ֆր.
վեցամսեայ 7 »
Արտասահմանի
համար տարեկան 15 ֆր.
վեցամսեայ 8 »
Ամերիկայի համար
տարեկան 3 տ.
վեցամսեայ 1.50 »

Ծանուցման տողը առաջին երեսին համար 40 սանթիմ իսկ վերջին երեսին համար 20 սանթիմ է, կրկին և աւելի անգամներու համար 20 0/0 զեղչ կ'ըլլայ:

—o—

Վառնայի համար ձեռ. քն 10 սանթիմ է

ՇԱՐԺՈՒՄ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱԲԹԻ ԵՒ ՇԱԲԱԹ ՕՐԵՐԸ.

Отговорникъ: СТЕПАНЪ КАНАРЯНЪ

Նամակ եւ դրամ ղրկել խմբագրութեան հասցէին

Редакц... на вѣстникъ "Шаржумъ", Варна

Redaction du journal „Charjoum" Varna (Bulgarie)

—o—

Պուլկարիոյ համար ձեռքն 15 ՍԱՆԹԻՄ
Արտասահմանի համար ձեռքն 20 ՍԱՆԹԻՄ

—o—

Գրութիւնք ետ չեն տրուիր

«ՇԱՐԺՈՒՄ»Ի ԲԱԺԱՆՈՐԴ ԳՐՈՒՈՂԸ ԲԱԺԱՆԵԳԻՆԸ ՊԷՏՔ Է ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԷ

Ս. ԳԱԲՐԻԷԼԵԱՆ

Գլխաւոր Գործակալ

ՊՈՒԼԿԱՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵՆԷ ԵՐԱՇԽԱՒՈՐԵԱԼ ՍՈՖԻԱ ՔԱՂԱՔԻ ՎԻՃԱԿԱՀԱՆՈՒԹԵԱՆ ՏՈՄՍԵՐՈՒՆ.

Տոմսակ գնել փափաքողներ կրնան իրեն դիմել՝
Զար-Պորիս փողոց Վառնա

Café Promenade
Vienne

Այս չքեղ սրճարանը կը գտնուի Վիէննա Ֆրանց Ժօզէֆ քարափին վրայ. կըստանայ զանազան հայերէն թերթեր. Առհասարակ բոլոր հայ կամ արեւելքցի վաճառականները այս տեղ կը յաճախեն. Ուստի օտար երկիրներէ եկող հայերը կը հրաւիրուին դիմել հոս ուր պիտի գտնեն իրենց յարմար դիւրութիւնները և անհրաժեշտ տեղեկութիւնները.

ԿՈՎԿԱՍԻ ՎԻՃԱԿԸ

Երկու ամսուան մեկուսացումէ մը ետքը Կովկասի հաղորդակցութիւնները վերսկսած ըլլալով մեզի հասած հայ թերթերէն կը քաղենք այդ ժամանակամիջոցին մէջ անցած դարձածներուն կարեւոր մասը, որպէսզի ընթերցողը Կովկասի բուն վիճակին վրայ լաւ տեղեկութիւն ունենայ, և լուսաբանուին իր կարծիքները հոն պատահածներուն մասին.

Շուշի, 1 դեկտեմբերի

Կրիտիքական րոպէներն աչքի առաջ ունենալով, խնդրում եմ ձեր աջակցութիւնը. որպէսզի կատարուի մեր խնդիրը. Նոյ. 28ի հեռագրով ուղղուած փոխարքային. Ահա այդ հեռագիրը. —Ուրբաթ. երկու ազգերի հոգեւորականների հանդիսաւոր թափօրին, և երկու կողմից արտասանուած ճառերին իմասին վերջնական հաշտութեան, հետեւեց Թուրքերի կողմից շաբաթ օրն իսկ խայտառակ պրովոկացիա. սպանեցին մի հայ հովիւ քաղաքի մօտերքում, տարան նախիրը, իսկ երէկ, սպանեցին քաղաքի պատերի մօտ մի հայի, որի ականջներն ու քիթը կտրեցին և յափշտակեցին նրա երկու ընկերներին, որոնց նոյնպէս երեւի սպանած կը լինին. Այսպիսի երեւոյթներ որ կրկնւում են ամեն օր, յաճախակի են դառնում և ցոյցի կերպարանք են ստանում հայերի դէմ,— որոնք համբերում են և դիմանում.

Գաւառներում տեղի են ունենում խմբական յարձակումներ հայ գիւղերի վրայ (Դօլանքար, Խրամուտ, Խանարադ և այլն). Ամբողջ գաւառում փոստային խճուղիները փակել են Թուրքերը. Հայերի պաշարները վերջացել են. Օգոստոսի 16ի հայերի դէմ Թուրքերի յայտարարած բօյկոտը խստութեամբ շարունակւում է. Քաղաքին սով, ցուրտ և հիւանդութիւն է սպառնում, չըլինելով որ իւրաքանչիւրը րոպէ կարող է սկսել կոտորած և հըրդեհը. Նորից խնդրում եմ ձերդ պայծառափայլութիւնից ուղարկել զօրք և թնդանօթ, անխուսափելի ընդհարումների առաջն առնելու համար. Խնդրում եմ կարգադրել խաղաղացնելու գաւառը և ազատելու խճուղիները աւազակներից.

Թեմական առաջնորդ
ԱՇՈՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ

Շուլավէր, Նոյ 26 ժամը

Շուլավէրը 3 օր է, շըրջապատուած է 2000 զինուած Թուրքերով, որոնք պատրաստւում են յարձակում գործելու. Առ այժմ ոչնչացնում և թալանում են շրջակայքը. Այստեղ զօրք չըկայ. Օգնեցէք որքան կարող էք.

Գործակալ քահանայ
Իսահակեան

——

2000 զինուած բորչալուցի Թուրքեր պաշարել են մեզ և սպառնում են վերջնականապէս ոչնչացնել. իշխանութիւնը զօրք չունի. Թուրքերին գրգռել է Թիֆլիզի կոտորածը. Իսէր Աստուծոյ փրկեցէք հայերին»։
Շուլավէրցիների յանձնարարութեամբ
Գաւառապետ կապիտան Բէգլանով

——

Գաւառապետ Բէգլանովին, Շուլավէր. Ոչ մի ընդհարում տեղի չէ ունեցել այս տեղ. միայն հատ-հատ սպանութիւններ. Երեք օր է, որ արդէն ամէն ինչ հանգիստ է. Թուրքերի մէջ տարածուած լուրերը հնարովի են և պրովոկատորական նպատակով տրուած.

Տատուրեան

——

Հաղորդում են, որ Շնող գիւղի վրայ են յարձակուել Թուրքերը, սակայն ուժեղ դիմադրութեան հանդիպելով՝ հեռացել են.

(Ք. Գ. Լ.)

——

Գանձակ. 26 Նոյեմբերի.

Այստեղ դրութիւնը լարուած է. Թուրքերը առաջին հաշտութիւնից յետոյ ամենալկտի կերպով դրժեցին խոստումը և յարձակուեցին Թուրքական մասը մըտած հայերի վրայ. Սպաննուածների թիւը 10—15 է. Նրանց մէջ կան կայարան գնացողներ և վերադարձողներ.

Հրացանաձգութիւնը լսելուն պէս հայերը բռնեցին իրանց մասում գտնուած 13 Թուրքերի, իսկ երբ բերին հայերի դիակները և դրանով կատարուած ոճրագործութիւնը, այն ժամանակ նրանք էլ սպանեցին 10 Թուրքերի.

——

Նոյ. 18 ին, առաւ. ժամը 10ին սկսեց հրացանաձգութիւն հայերի և Թուրքերի միջեւ. Չընայելով երկու կողմի եռանդուն հրացանաձգութեան, սպանուածները համեմատաբար աւելի քիչ են— 30. մեծ մասը հայ առեւտրականներ. կան նաև վիրաւորներ. Դիւամանակ սկսուեց հրդեհ Թրքական թաղում գտնուող հայերի մագազիններում. Ժողովուրդը սարսափած՝ սկսեց փախչել. Ընդհարումը սպառնում էր կոտորած դառնալ, սակայն դրա առաջն առնուեցաւ տեղական թնդանօթաձիգ խմբի երեւան գալով. ձեռնարկութեամբ ռոմիստր Խուցեվի. Զօրքը տեղաւորուեց քաղաքի զանազան մասերում. Ոստիկանութիւնը անգործ էր մնում, որովհետեւ փողոցներում սաստիկ հրացանաձգութիւն էր. Ընդհ. նահ. գեն. Տակայշվիլին նոյնպէս, մինչեւ Խուցիեվի հասնելը 4 թնդանօթներով հրամանատարութեամբ գնդ. Բուբինսկու այսինքն մինչեւ ժամը 12 ը, բոլորովին տնից դուրս չեկաւ. Իսկ յետոյ, քաղաքի մէջ երեւալով, ոչ մի եռանդուն միջոցներ ձեռք չառաւ՝ անկարգութիւնները զսպելու համար և այդ էր պատճառը, որ ապագայ ընդհարումների և կոտորածների առաջն առնելու գործը իրանց վրայ առան գեներալ Ֆլէյշէրը և ռոտմ. Խուցիեվը. Քաղաքացիք նրանց սկսեցին դիմել օգնութեան. Նրանց կտրուկ միջոցներով և կոզակների օգնութեամբ, Թուրքաց թաղերի մառաններում, տներում և հիւրանոցներում թագնուած հայերը ազատուեցին և զօրքի հսկողութեամբ բերուեցին հայկական թաղը, իսկ դրսի Թուրքերը քշուեցին քաղաքից դուրս...

Հրդեհի դէմն առնել անհնար է, որովհետեւ քաղաքում միայն երկու հրդեհաշէջ մեքենայ կայ... Ամենայն հաւանականութեամբ ընդհարումները պիտի շարունակուեն, ինկատի ունենալով, որ շրջակայքից գալիս են զինուած բազմութիւններ...

Ջէվանշիրի և Ջիբրայիլի գաւառներում գեներալ Տակայշվիլին նոյնպէս ոչ մի միջոց ձեռք չէ առել և սոսկալի չափերով դէպքեր անշուշտ պիտի

սկսեն շուտով»...

Ահա գեն. Տակայշվիլու պատկերը, ըստ նոյն իսկ պաշտօնական հաղորդագրութեան։ Սրանից յետոյ էլ ի՞նչ փաստ, որ գեներալը իր պաշտօնէութեան ընթացքում զբաղուած է եղել միմիայն այդ ընդհարումները կազմակերպելով՝ ինչպէս վարպետ այդ բանում...

ԿՈՎԿԱՍԻ ՓՈԽԱՐՔԱՅ Վ. ՏԱՇՔՈՎԻ ՀՐԱԺԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ «ԱՐՇԱԼՈՅՍ»ԻՆ ՄԷՋ ԿԸ ԿԱՐԴԱՆՔ ՀԵՏԵՒԵԱԼԸ

— —

Պետերբուրգում ստացած տեղեկութիւնների հիման վրայ, կոմս Վարանցով-Դաշկովը թողնում է իր փոխարքայութեան պաշտօնը Կովկասում, Ինչպէս ասում է «Ռուս. Վեդ.» թերթը, այդ հրաժարուելը սերտ կապ ունի այն դէպքի հետ, որ թոյլ տուեց Բորչալուի թուրքերի խմբովին մուտքը Թիֆլիզում. Այդ թուրք հրոսակների քաղաք մտնելուց շատ առաջ, հայ ազգաբնակութիւնը, յուզուած հասնող լուրերից, իր պատգամաւորների միջոցաւ դիմեց փոխարքային և խնդրեց միջոցներ ձեռք առնել՝ արիւնահեղութեան և թուրքերի ներս մտնելու առաջն առնելու համար։ Փոխարքան հանգստացրեց պատգամաւորներին և խօսք տուեց իրենից կախուած բոլոր միջոցները ձեռք առնել, սակայն այդ «միջոցները» չբաւականացան։ Թուրքերը քաղաք մտան և գազանային կոտորածներ սարքեցին։

Հարկ կը համարինք յայտնել նաեւ թէ փոխարքային յաջորդ Ապտուլահովը նշանակուած ըլլալուն լուրը բոլորովին անհիմն է.

(Մ. Խ.)

—)o(—

Երեւանի ժամանակաւոր գեներալ նահանգապետը հեռագրում է Կովկասի Փոխարքային դեկտ. 29-ից. «Համեմատական խաղաղութիւնը որ վերականգնուած էր նահանգում Զանգի անկարգութիւններից յետոյ՝ նորից խանգարուած է Երեւանում կատարուած սպանութեան առթիւ, նախ՝ հայերի թուրքերի վրայ յարձակումից, յետոյ՝ Նախիջեւանի պոստային խճուղու վրայով անցնող ճանապարհորդների վրայ թուրքերի յարձակումից։ Կարգը վերականգնելու համար Նախիջեւան են ուղարկուած գաւառապետը և պատուաւոր մարդիկ»

——

Ստացանք հետեւեալ հեռագիրը.

ՇՈՒՇԻ, յունուար 4

Դեկտ. 30-ի առաւօտեան անհագին քանակութեամբ թուրքեր, առաջնորդութեամբ մոլլայի, յարձակւեցին Կարագլլախ գիւղի վրայ։ Հայերը քաջութեամբ պաշտպանւեցին. երեկոյեան թուրքերը ետ մղւեցին և հեռացան իրանց դիրքերից։ Սպանուած են շատ թուրքեր և մի քանի հայեր.

—o—

Թիֆլիզի թեմ. Առաջնորդը յունուարի 2-ից ստացել է հետեւեալ հեռագիրը.

ԳԱՆՁԱԿ, յունուար 2

Դեկտ. 31-ին քաղաքից 7 վերստ հեռու գտնւող Փօրէրի այգուց անհետացել են 4 պարսկահպատակ թուրքեր։ Պարսից հիւպատոսը, այդ անհետացումը հայ ազգաբնակութեան գործը համարելով, ինձնից պահանջում է անշուշտ որոնել կորուածներին և յանձնել իրան, սպառնում է, հակառակ դէպքում, որ Պարսկաստանի հայերը կը վտանգւեն։ Ձեզ լաւ յայտնի է այն լաւ վերաբերմունքը, որ հայերը ունեցել են դէպի պարսկահպատակ թուրքերը՝ թուրք-հայկական 11 ամսւայ ընդհարումների ընթացքում ընդհանրապէս, այլ և մասնաւորապէս Գանձակում։ Իբր իմ հօտի ներկայացուցիչ յայտնում եմ, որ 4 թուրքերի անհետանալու խնդրում Գանձակի հայերը մասնակից չեն. իմ ձեռքով կատարուած քննութիւնը պարզեց այդ և քննութեան արդիւնքը ես հաղորդեցի տեղական զինուորական իշխանութեանը, խնդրելով, որ ինքն էլ քննութիւն սկսէ՝ իմ ներկայացուցչի մասնակցութեամբ։ Այդ քննութիւնը այժմ կատարւում է։ Ծանուցանելով այս մասին ձեր միջոցով Նորին Վեհափառութեան, խնդրում եմ յայտնել Թիֆլիզի պարսից հիւպատոսին, որ նա էլ միջոցներ ձեռք առնէ, որպէսզի Գանձակի հայերը ազատւեն տեղիս պարսից հիւպատոսի իզուր մեղադրանքից։

—o—

Մոսկւայից հեռագրում են յունուարի 3-ին, որ Ժամհարեանների դրամատունը հետեւեալ հեռագիրն է ստացել Շուշուց. «Այս ծանր րոպէներում, երբ քաղաքը պաշարման մէջ է և չորս կողմը միայն մահն է փռւում, ոչ-ոք չգիտէ. թէ ինչ է սպասւում վաղուան օրը. դիմում ենք մեր հայրենակիցներին. յայտնեցէ՛ք մեր ձայնը կառավարութեան, թեթեւացրէք մեր տանջանքները»։

—o—

Երեւանից տեղեկացնում են, որ դեկտ. 29-ին սկսւել է թուրք-հայկական ընդհարումը. Թուրքերը եղան նախայարձակները։ Սպանւեցին երկու հայ և 8 թուրք։ Սակայն շուտով խաղաղութիւն տիրեց և միւս օրն իսկ խանութները դարձեալ բացւեցին։

—|—

Նորաշէն կայարանից հեռագրում են, որ դեկտ. 30-ի գիշերը թուրքերը յարձակւեցին հայերի վրայ։ Հայերը մտան երկաթուղային բնակարանները եւ սկսեցին պաշտպանուել։ Սպանուած են մօտ 9 հայ, Լուրը է տրուած գաւառապետին՝ օգնական զօրք հասցնելու։

—|—

Բագուի քաղաքագլուխ Թուրք Սաֆար-Ալիեվը հեռագրել է Կովկասի փոխարքային, որ Շուշում իբր թէ հայերը կոտորում են թուրքերին, խնդրում է միջոցներ ձեռք առնել, ապա թէ ոչ Բագւում թուրքերին զսպելը դժւար կը լինի։

—|—

Քարավանսարայից յունուար 3-ի թւով հեռագրում են, որ Թաթլիբէնդը երրորդ օրն է, որ պաշարւել է թուրքերով։ Հրացանաձգութեան ժամանակ սպանւել են երկու հայեր և շատ թուրքեր։ Կռիւը դեռ շարունակւում է։ Դեկտ. 31-ին թուրքերը պաշարել են Զամբարաքը, քիչ հրացան արձակել եւ ետ քաշւել, թողնելով 5 սպանուած, հայերից վիրաւորւել են 2 հոգի։ Բաշքանդին օգնութեան գնացող հայերը հանդիպեցին թուրքերի եւ կռիւ սկսւեց. սպանւել են 2 հայ և քսան թուրք։

—|—

Ջալալ-Օղլուց հաղորդում են որ Աւկիբիրունի գոմերում գտնւել են 8 այրուած հայերի դիակներ։ Այդ այրուածները ապրում էին գոմերում և դեկտ. 24-ից անդարձ չքացել էին։

ՆԱՄԱԿԱՏՈՒՓ

Գաւիտճի Հանի Ա. Իզմիրլեան ՑԻԼԻՊԻ. — Ձեր ղրկած 11 լեվ 45 ս. ընդունած ենք։

Ձը վճարող բաժանորդներուն. — Կը խնդրենք որ մինչեւ փետրվար շտապեն իրենց պարտքերը վճարել։

ԲԱՐԻԶԻ ՀԱՅԵՐԸ

Բ.

Որոշապէս յայտնի չէ ինծ թէ առհասարակ մեծամասնութեան զբաղումը ինչ է այս աշխատաւոր դասակարգին, սակայն կըսեն որ գերձակներու թիւը գերակշիռ է. Թերեւս.

Ընկերութիւն մըն ալ հիմնած են ասոնք 1904 Մայիսէն ի վեր. «Բարիզի Հայ Աշխատաւորաց Միութիւն» անուան տակ եւ. Եթէ ներելի է ըսել, սահմանուած է ըլլալ է՛ն մնայուն. Թէ ինչո՞ւ, Մի խրտչիք եթէ [illegible]։

Միութեան նպատակն է «օգտակար ըլլալ իր անդամներուն բարոյապէս եւ նիւթապէս», (յօդ. 2)։

Բարոյապէսը, որքան որ տեսած եմ, շատ ողբալի վիճակ մը ունի. մեծագոյն ուժը կեդրոնացուած է նիւթականին վրայ, որ է, իր «խսկական անդամներու» հիւանդութեան եւ այլ ձախորդութեանց պահուն օգնութեան հասնիլ—(ինչ որ հնար չէ, քանի գանձանակին դրամին մեծ մասը յատկացուած է ուրիշ նպատակի) —եւ, աւելի գլխաւորը, Վիլ մը Բաոնի արժէքաւոր վիճակահանութեան թուղթերէն գնել եւ եթէ, օրին մէկը, քանի մը հազար շահուի, համեմատական չափով մը բաժնել անդամներուն մէջ... Ահա թէ ինչո՞ւ ըսի որ իր գոյութիւնը, առաւել քան ուրիշ ընկերութիւններ, ապահովուած է։ Որովհետեւ, իմացողը ֆրանք մը գրպանը գրած՝ կը վազէ անդամակցութեան... վարդափայլ վաղորդայնի մը բարձրաթռիչ յոյսով։

Կ'երեւի թէ այս ընկերութեանը հիմնողներուն մէջ գտնուէր են «գործի մարդիկ» որ հնարած են այս գիւտը. Ներկայիս միութեան տրամադրութեան ներքեւ կը գտնուին 6 նութիւններ կը ծնին. և զորս յարգել կուտուցանեն քեզ առաքինութիւն անուան տակ... Քեզի իրաւամբ պիտի խրատէի ըմբոստանալ ատոնց դէմ... բայց ահա ոստիկանը, դատաւորները, բանտը, կախաղանը... Ուստի լաւագոյն է չարիքը նուազեցնել քու ընկերական կամ անհատական պարտականութիւններուդ թիւը նուազեցնելով. այսինքն կրցածիդ չափ հեռանալով մարդոցմէ, մօտենալով անբաններուն, տունկերուն, ծաղիկներուն... անոնց պէս, ապրելով այն չքեղ կեանքը զոր բնութեան ծոցէն իսկ կը քաղեն այսինքն Գեղեցկութենէն... Ու յետոյ անցնելով կեանքէդ առանց զքեզ տրտմեցնող խղճմտանքերու, առանց սիրոյ կամ դրամի կիրքերու՝ որոնք կաղտոտեն մարդը, առանց մտաւոր անհանգստութեանց՝ որոնք կը սպաննեն, մահդ ալ պիտի անցնի առանց ցնցումի... Ու աշխարհ ամբողջ, կեանքիդ ան-

ՕՔԹԱՎ ՄԻՐՊՕ

ԱՊՊԷ ԺԻՒԼ

Բ. ՄԱՍ

(Հատուածներ)

— Ի՞նչ պէտք է փնտռես կեանքի մէջ... Երջանկութիւնը... Իսկ զայն ձեռք բերելու համար պէտք է մարզես մարմինդ, ինչ որ առողջութիւն կուտայ և ուղեղիդ մէջ կարելի եղածին չափ քիչ գաղափար թխմես. որովհետեւ գաղափարները հանգիստդ կը վրդովեն, և քեզ կը մղեն միշտ անօգուտ, միշտ վշտագին և յաճախ եղեռնական գործերու։ Զգալ քու եսդ, անչօշափելի բան մը ըլլալ՝ բնութեան մէջ ձուլուած՝ ինչպէս կաթիլ մը անձրեւը որ ամպերէն կը թափի ծովուն մէջ ու հոն կը հալի. այս պէտք է ըլլայ նպատակակէտը քու բոլոր ճիգերուդ... Գիտցիր որ դիւրին բան չէ այդ նպատակին հասնիլը, ու աւելի հեշտիւ մենք կրնանք Ցիսուս-Քրիստոս մը, Մուհամմէտ մը, Նափոլէոն մը մէջտեղ հանել, քան թէ Ոչինչ մը... Ուրեմն մտիկ ըրէ զիս... Քու բոլոր ծանօթութիւններդ այն մասին թէ մարդկութիւն ըսուած մեքենան ի՞նչպէս կը բանի, պէտք է ամփոփես հետեւեալ չորս ստիպողաբար անհրաժեշտ կէտերուն մէջ. 1.— Մարդը չար ու տխմար գազան մըն է, 2. — Արդարութիւնը խայտառակութիւն մըն է, 3. — Սէրը՝ զազրելութիւն մը, 4. —Աստուած՝ ցնորք մը... Դուն պիտի սիրես բնութիւնը, պիտի պաշտես զայն նոյն իսկ, եթէ կուզես, բայց ոչ երբէք արգիստներու կամ գիտուններու նման, որոնք ապուշօրէն կը յանդգնին յանգերով զայն արտայայտել ջանալու, կամ գիտական տարազներով բացատրելու. զայն պիտի պաշտես տգէտի մը պաշտամունքով, ինչպէս ջերմեռանդ կնիկները կը պաշտեն զ'Աստուած՝ առանց բնաւ անոր մասին վիճելու։ Եթէ յանկարծ անմիտ քմայքէ մը բռնուած անոր անմեկնելի գաղտնիքին թափանցել ուզես, կամ անոր անքննելի խորհուրդը քննելու ելլես... ալ մնաս բարո՛վ ըսէ երջանկութեան։ Այն օրէն՝ այլեւս դուն մշտաշարչար որսը պիտի ըլլաս տարակոյսին ու անյագելիին։ Դժբաղդաբար, ընկերութեան մը մէջ է որ կապրիս, կեղեքիչ օրէնքներու սպառնալիքին տակ, գարշելի հաստատութիւններով շրջապատուած՝ որոնք եկած են խորտակելու իսկական բնութիւնն ու նախնական բանը։ Այս պարագան բազմապատիկ պարտականութիւններ կը դնէ վրադ. պարտականութիւն դէպի իշխանութիւնը, դէպի հայրենիքը, դէպի քու նմանդ—պարտականութիւններ՝ որոնք. բոլորն ալ, մոլութիւններ, ոճիրներ, անամօթութիւններ, վայրե-

տոմսակ՝ իւրաքանչիւրը հարիւր Ֆրանք արժողութեամբ։

Մենք բնաւ դիտողութիւն մը ընելու հարկին մէջ պիտի չի գտնուէինք՝ եթէ տեսնէինք որ այս սեղանաւորական հաշիւները կը կազմեն երկրորդական կէտեր Բայց ո՛չ ցաւալի է արձանագրել, այդպէս չէ՛։ Միութեան ճիգն ու կորովը կեդրոնացուցած են նիւթականին կողմը և «բարոյականը» կը մնայ արգահատելի կացութեան մէջ։ Ժողովներ կըլլան ամիսը կամ երկու ամիսը անգամ մը "ընկերական գումարումներ» անունին տակ եւ... զսպեմ ինքզինքս։

Բարիզի մէջ հիմնուած միութեան մը անդամներուն «արգիլուած է խօսիլ կրօնական եւ քաղաքական խնդիրներու» մասին։ Մարդիկ ուրիշ տեղեր գտնուման արիւն կը թափեն ազատ խօսքի իրաւունք ստանալու համար, իսկ հոս, հայեր, ունեցածնին կը զրկեն ինքզինքնուն...

Հարուստներէ եւ չօջերէ բաղկացած ընկերութեան մը համար կը հասկնայինք սոյն արգելումը՝ որովհետեւ խեղճերուն «շահերը կը վնասուին», բայց ի՞նչ վտանգ կայ աշխատաւորներու համար՝ գիս այլայլումի ենթարկելու վրայ էր երբ է վ ո է ք ա! գոչեցի։

Այնպէս կերեւի որ հոս աշխատաւոր մասն ալ զուրկ չէ չոչորդութենէ եւ պարագիտական հակումներէ։ Կրօնական վէճի արգիլում դրուած է սա հեռատեսութեամբ։ Ցանկարծ օրին մէկ երեւան գան այնպիսիներ, որոնց սիրտը սլրած ու հոգին փոթորկած է տեսնելով Ժան-Կուժօն փողոցի աննպատակ շէնքը եւ այդ հարցը յուզեն, ինչպէս եւ յուզեն հոգաբարձուական եւ այլն խնդիրներ. Բայց որովհետեւ եկեղեցականաոյց եւ հոգաբարձու դասին մէջ Միութեան երբեմն ոսկոր նետող «բարերար անդամներ» կան. հետեւաբար «չարիքին» առջեւը կանուխէն առած են այս «գործի մարդիկը».— ապա թէ ոչ այդ պարագային ալ իրենց "արտաքոյ եկամուտի» աղբիւրը կը չորնար. որովհետեւ, գիտէք թէ մեր չօջերուն սիրտը —եթէ երբէք ունին,— շինուած է շատ փափուկ նիւթէ եւ ենթակայ է շուտով վնասուելու՝ անբուժելիօրէն.— ուստի գրութիւնն է, ս ի ն է գ ո ւ ա ն օ ն!

Քաղաքական խնդիրներու վրայ ճառել արգիլուած է, բայց եւ այնպէս, որոշած են դասախօսել «ազգային ու ազգային կեանքը շահագրգռող» նիւթերու վրայ՛.. Ի՞նչ հասկցաք ասկէ՛։ Ինծի համար անլուծելի է։ Իրենց ժողովներէն մէկուն միայն ներկայ ըլլալէ վերջ՝ սա եզրակացութեան կրցայ գալ.—Վիճելանիւթերու բնաբանը մօտաւորապէս կը դառնայ հետեւեալ իմաստասիրական հարցին շուրջը—հա՞ւը առաջ էր՝ թէ հաւկիթը,—եւ աւելին ալ պահանջել՝ արդէն պահանջկոտութիւն կըլլար։

Պարոններ, մէկ կողմ նետեցէք ձեր սեղանաւորական հաշիւները եւ ձեր կորովը կեդրոնացուցէք անդամներու մտաւոր ու բարոյական զարգացման վրայ. դրամը չէ՛ որ կստեղծէ ՄԱՐԴԸ. այլ մարդն է որ կըյառաջացնէ դրամը ճահագրգրեցէք անդամները առօրեայ ազգային ու քաղաքական հարցերով լուսաւորեցէք իրենց միտքը դէպի նորանոր նպատակներն ու պայմանները ազգային կեանքի, յատկացուցէք ռաւելապէս ձեր ամսէ ամիս հաւաքած լումաները աւելի շահեկան ու օգտաշատ ձեռնարկներու՝ քան Վիլ տը Բառիի տոմսակ մը գնելը... Եթէ Բարիզի մտաւորական դասը ընդունակութիւն եւ արիութիւն չունի առաջնորդելու, Աշխատաւորացը պարտաւոր է ըլլալ յառաջընթաց: Մեր մէջ, տխուր է նորէն կրկնել, մանաւանդ Բարիզ, մտաւորական մասը չքացեր է անհատական արժանապատուութենէ՝ իրեն գոյութիւնը կախած ըլլալով քաղքենի, մեծազանգուած չօրպաճիի մը իւզոտ փէշերէն։ Անոնք նախընտրելի համարած են այդ վիճակը՝ քան ինքնուրոյն անկախ մտքով եւ համոզումներով քիչ մը առաւել չարքաշ կեանքը։ Բայց նոյնը չէ աշխատաւորին համար. ան իր անձին տէրն է, իր գոյութիւնը իր բազկին վրայ. հետեւաբար պարտաւոր է օր առաջ լուսաւորել իր անդամներուն միտքը ամէն կէտի մէջ եւ պատրաստել անվախ եւ կռուող ոյժ մը ընդդէմ ապականուած չոչորդութեան։

Ուրախալի է ըսել որ այս «Աշխատաւորաց»ը հաստատած է վերջերս «ընթերցարան» մը եւ շուտով դրադարան մըն ալ հաստատելու դիտաւորութիւն եւ կամք կայ։ Գովելի կէտեր են ասոնք։

Սոյն վերիվերոյ ուրուագծին՝ Բարիզի հայութեան վրայ՝ վերջ կը դնեմ այս տեղ։ Կարելի էր ընդարձակ սիւնակներ լեցնել այս առթիւ, բայց բնաբանիս դէմ մեղանչել չեմ ուզեր.—Թէեւ քիչ մը տարուեցայ այդ մեղքէն՛։ Սակայն օր մը, երբ աւելի տրամադրելի եւ բարեպատեհ առիթներ ներկայանան, կը խոստանամ այն ատեն երեւան գալ նկարչի թ ա լ է ո վ, վրձինելու իւրաքանչիւր տեսարան եւ իւրաքանչիւր երեւոյթ իր բնական եւ լիուլի գոյներով։ Սա ուրուագիծ մըն էր մի միայն։

Մ. Ցոյակ

ՀԱՅ ՅԵՂԱՓՈԽԱԿԱՆ ԿՈՒՍԱԿ. ՑՈՒԹԵԱՆ ՆՄՈՅՇ ՄԸ

Ընթերցողը խտորեւ զզուանքով պիտի կարդայ անշուշտ յեղափոխական կոմիտէի մը կողմէ տրուած այլանդակ յայտարարութիւն մը. մարմին մը որ հայ յեղափոխական կուսակցութիւն անունը կը կրէ, որ հայերէ բաղկացած է և կուրանայ իր ազգակիցները տանջող ցաւերը «ինչ որ սոցիալ տեմօքրասիայի գիրկը նետուելու համար։ Այո, մեր մէջ այս տիպարները միայն պակաս մնացած էին, անոնք ալ սկըսան բուսնիլ։

Քաղաքական յեղափոխական կեանքով հետաքրքրուող հասարակութեանը յայտնի է, որ Հնչակեան կուսակցութեան Կովկասեան կոմիտէները, որոնք զբաղուած էին միմիայն Տաճկա-Հայաստանի ազատագրական գործով, այս վերջին տարին սկսել էին ակտիւ կերպով մասնակցել Ռուսաստան-Կովկասի յեղափոխական շարժմանը։ Այդ՝ այսպէս կոչուած, «նոր գործունէութիւնը» քննւում է կուսակցութեան մի կոնֆերենցիայում (սեպտ. 1904 թ.), ուր որոշվում է գործել Կովկասում «միայն եւ միմիայն սոցիալ-դէմօկրատական հողի վրայ»: Եւ ոլովհետեւ «Ներկայումս Ռուսաստանում, որպէս եւ Կովկասում գործում է Ռ. Ս. Դ. Բ. Կ.-թիւնը, որ իր մէջ է ամփոփել զանազան ազգերի սոցիալ դէմօկրատներին եւ որը կոչւ է յայտարարել ընդդէմ տիրող բռնապետական ռէժիմ՝ ցարիզմի եւ ընդհանրապէս կապիտալիստ դասակարգի դէմ», կոնֆերենցիէն գալիս է այն եզրակացութեան, որ «միութիւնը» (Ռ. Ս. Դ. Բ. կուսակցութեան հետ) ներկայանում է անհրաժեշտ եւ յայտնւում հիմնական մի պայման սոցիալ դեմոկրատական աջող գործունէութեան»։ Ընդունելով Ռ. Ս. Դ. Բ. կուսակցութեան ծարգիրը, ժողովը ի նկատի ունենալով զանազան հանգամանքներ, որոշում է «առայժմ գործերը առաջ մղել մինչ համերաշխ Ռ. Ս. Դ. Բ. կուսակցութեան հետ, միաժամանակ մշակելով եւ ամէն միջոց գործ դնելով կարելիին չափ շուտով իրագործելու միութիւնը» (Շրջաբերական No 6)։

Սակայն այդ նոր գործունէութիւնը առաջ բերեց կուսակցութեան մէջ երկու տարբեր եւ հակառակ հոսանքներ — բանւորական-սոցիալիստական, որը գործում էր վերը բերած որոշումների համաձայն, ջանանալով կուսակցութեան Կովկասեան կոմիտէների գործակցութիւնը տաճկա հայկական դատին ամբողջապէս կտրել վերջինից, հնարաւոր դարձնելու միութիւնը Ռ. Ս. Դ. Բ. կուսակցութեան հետ։ Միւս հոսանքն էր բուրժուական – ազգայնական, որ դասակարգային սկզբունքը չժխտելով եւ «Սոցիալիզմ», «սոցիալ դէմոկրատիզմ» դիմակների տակ իրանց իսկական գոյնը ծածկելով, հակառակ կոնֆերենցիայի որոշման, ձգտում էր պահպանել կուսակցութեան ամբողջութիւնը իր դիւալիզմով եւ հակասութիւններով հանդերձ։ Կուսակցութեան այդ ներքին պայքարին վերջ տալու եւ խայտառակ դրութիւնից ընդմիշտ ազատուելու համար, հրաւիրւում է արտակարգ պատգամաւորական ժողով, ուր նացիոնալիստները յաղթող են հանդիսանում, շնորհիւ Տաճկաստանի եւ այլ տեղերի կոմիտէների պաշտպանութեան եւ չարքերի անգիտութեան։ Այդ համագումարը, հակառակ նոյն կուսակցութեան կոնֆերենցիայի որոշման եւ սօցալ դէմոկրատ պատգամաւորների, որոշում է. «Հնչակեան կուսակցութիւնը, որպէս մի ուրոյն քաղաքական յեղափոխական կուսակցութիւն, պէտք է շարունակէ իր գործունէութիւնը մեր ծրագրի տուած սկզբունքներով. —որպէս մի ամբողջութիւն մի ընդհանուր կեդրոնով, մի պաշտօնական օրգանով (Հնչակ), մի ընդհանուր կասսայով.— ընդունելով Տաճկահայ դատը կուսակցութեանս ամենառաջին գործը. Ռուսաստանում էլ պէտք է գործել սոցիալ դէմոկրատական սկզբունքների վրայ՝ համերաշխ Ռուսաստանում գործող սոցիալ դէմոկրատների հետ։»

Այժմ դիրքերը պարզ են եւ որոշ: Մենք մեզ հետ միացած եւ ուրիշ կոմիտէներ ու խմբեր, կանգնած լինելով միջազգային սոցիալ դէմօկրատիայի անխախտ սկզբունքների վրայ, չենք կարող ընդունիլ այդ աբսուրդ ու հակադասակարգային որոշումը եւ յայտարարում ենք ի գիտութիւն հասարակութեան եւ յեղափոխական կազմակերպութիւնների, որ ա յ լ ե ւ ս ո չ մ ի կ ա պ ե ւ ա ռ ն չ ո ւ թ ի ն չ ո ւ ն ե ն ք Հնչակեան կուսակցութեան հետ։

Ընդունած լինելով Ռ. Ս. Դ. Բ. կուսակցութեան ծրագիրը եւ բանւորական կուսակցութեան միջազգային կազմակերպական ձեւը, մենք միանում ենք այդ ընդհանուր կու-

---

գիտակ, անգիտակ պիտի մնայ նաեւ մահուանդ... Դուն պիտի նմանիս անտառի այն սիրուն կենդանիներուն, որոնց ոսկրոտիքն իսկ անկարելի է գտնել. եւ որոնք կանհետանա՛ն իրերու մէջ չոգիացած... Կը տեսնե՞ս, զաւակս, այս ճշմարտութիւնները եթէ ժամանակին գիտցած ըլլայի, հիմայ այսպէս չի պիտի մնայի։ Որովհետեւ սինլքոր մըն եմ ես, չարագործ էակ մը, աղտոտ կիրքերու անարգ գերին... Ինչ որ է, այս մասին գուցէ ապագային կը խօսիմ քեզի հետ... Եւ գիտես ինչո՞ւ։ Որովհետեւ, լեզուս ձայն մը թոթովել հազիւ սկսած՝ ուղեղս լեցուցին այլանդակ գաղափարներով, սիրտս՝ գերմարդկային զգացումներով։ Գործարաններ ունէի, և ինծի սկսան հասկցնել յունարէն, լատիներէն, կամ ֆրանսերէն լեզուներով թէ ամօթ էր զանոնք գործածել... Մարմնոյս պէս, իմացականութեանս պաշտօններն ալ ջլածանեցին, և, փոխանակ բնական, բնազդական, կեանքով առլցուն մարդուն, շինեցին զիս արհեստական խայլիկ մը, քաղաքակրթութեան մեքենական խմաճուկ մը, իտէալով ուռած՝... այն իտէալով՝ որ ծնունդ տուած է դրասատէրներու, քահանաներու, դրպանհասներու, ճոփակեացներու, ոճրագործներու և դժբաղդներու... Հա՛, քիչ առաջ կըսէի թէ Աստուած ցնորք մըն է... Վերջապէս, չեմ գիտեր, բան մը չեմ գիտեր. որովհետեւ մեր առած դաստիարակութիւնը և մեր ուսած ուսումները կը սորվեցնեն մեզի բան մը չի գիտնալ ու ամէն բանի վրայ տարակուսիլ... Կարելի է Աստուած մը կայ... Կարելի է շատ աստուածներ կան... Ի՞նչ գիտնամ... Հիմա, գնա վազվզէ... Ո՛չ, կեցի՛ր... Այս առաւօտ դարձեալ որոգայթ մը գտայ սարեակներու համար լարուած... քեզի կարգիլեմ թռչուն որսալ... պէտք է յարգել թռչուններու կեանքը... Գիտես թէ ի՞նչ բան կոչնչացնես ասոնցմով... Նաւագ մը, սարսուռ մը, կեանք մըն է վերջապէս, զոր կոչնչացնես և որ քու կեանքէդ աւելի արժէք ունի... Թռչուններուն աչքին մէջ նայա՞ծ ես բնաւ... Ոչ... Է՛ն, նայէ անգամ մը ու ալ չի պիտի սպաննես... Հիմայ, գնա խաղալու... Ծառերուն վրայ բարձրացիր.. Վար նետէ.. Գնա՛...

Ահա, տարտամ ու զգայնոտ անխըխանականութեան այս ճառով էր որ, հօրեղբայրս սկսաւ զիս պատրաստել ապագայ պսակաւորի քննութեան, որուն կը տենչար ծնողքս։

(Շարունակելի)

—()०()—

սակցութեան հետ։ Միութեան մանրամասնութիւնները կը յայտարարենք մօտիկ ապագայում, երբ մեր կոնֆերէնցիան կը վերջանայ։ Իսկ Հնչակեան կուսակցութեանը յայտնում ենք, որ այն կռիւը, որը մին չեւ այժմ խուլ կերպով ենք մղել Հնչակեան նացիոնալիստների դէմ, այսուհետեւ բացարձակ կերպով պիտի մղենք ընդհանրապէս Հնչակեան կուսակցութեան դէմ։

Հնչակեան կուսակցութեան Նախկին Բաղուայ Բայօնի

Կոմիտէ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Անցեալ կիրակի, իշխանութեանս բոլոր գլխաւոր քաղաքներու մէջ, գործաւորական դասակարգը, վերջերս ելեկտրոնութեան քէսարկած արհեստաւորներու (էսնաֆ) օրինագծին դէմ, մեծ ցոյցեր ըրաւ։ Որոշուած է ամեն ճիգ թափել, այս օրէնքի գործադրումը վիժեցնելու համար։

— Սերպօ—Պուլկար մաքսային միութեան դէմ, Աւստրիա Հունգարիոյ յարուցած խոչնդոտները սաստիկ յուզած է Սերպ և Պուլկար ժողովուրդը, ժողովներ, միթինկներ կը գումարուին այդ մասին, և երկուստեք կը հրաւիրեն իրենց կառավարութիւնները դիմադրել Աւստրիական այս ոտնձգութեան դէմ։

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

ԹՈՒՐՔԻԱ

Եէմէնէն լուրջ լուրեր կը հասնին. Մարշալ Ֆէյզի բաշան Ումրան հասնելէն վերջ, յաջողեցաւ իր գործառնութեան յենակէտը վերադառնալ, և Ռանսա, Եէմէնի մայրաքաղաքը մտաւ։ Պէտուինները զանի դարձեալ շրջապատած են, Մարշալ Ֆէյզի բաշան, օգնութիւն խնդրած է։

— Մաքսային տուրքերու 3 0/0 բարձրացումի 1/3 դով Պաղտատի երկաթուղիին քիլօմէթրական ապահովութեան համար՝ գերմանական դեսպանութեան առաջարկին միւս հինգ դեսպանութիւնները կը հակառակին։

— Սուլթանի դէմ եղած մահափորձի առթիւ, Եըլտըզի մէջ Մէլհամէ Նէճիպ բաշայի նախագահութեամբ եղած յանձնախումբը, որ այս դատիս, Սթանպօլի եղեռնական ատեանի առջեւ տեսնուելէն ետքը ցրուած էր, դարձեալ պաշտօնի կանչուած է։ Նէճիպ Մէլհամէ բաշան կը պնդէ թէ՝ անպարտ արձակուած չորս հոգիի մեղապարտութեան մասին հաստատ փաստեր ունի։ Այս վերջինս միանգամայն կամքաստանէ նաև պարսկահայ և անգլիական հպատակ Շիրազի խանը, որուն «Բէրա Բալատ» պանդոկին մէջ ձերբակալուիլը հեռագիրները ծանուցին օրեր առաջ։

Անգլիոյ դեսպանը ազդու կերպով Շիրազիի ազատութիւնը կը պահանջէ, քանի որ յանցապարտ ըլլալուն համար, ոչ է ապացոյց չկայ. սակայն Նէճիպը ամէն տեսակ սրբեւակայական պատճառաբանութիւններ կը յօրինէ։

Հա՞րկ է կրկնել, թէ Պոլսոյ մէջ այսօր։ Բնակչութիւնը շատ անհանգիստ է, և դեսպաններու գործակատարութիւններու անտարբերութեանը մասին կը զարմանայ։ Որովհետեւ Ժորիսի խնդիրը անփոփոխ կը մնայ, և պէլճիգական գործակատարութեան զոհացում տրուած չէ մինչեւ հիմայ։ Կը կարծուի թէ՝ Սուլթանի դէմ եղած մահափորձի դատավարութեան վերաքննութիւնը, այս անել կացութենէ կերպով մը ազատելու համար սարքուած է։

ՌՈՒՍԻԱ

«Պէրլինէր Ցայթունկ» լրագրի կիմացնեն թէ՝ Նովոսինոգ քաղաքը ծովային ապստամբ զինուորները թնդանօթի բռնած են։

— Բէնզաի ոստիկանապետ Բրոզորովսկիի, յեղափոխական կազմակերպութիւնը իմացուցած է թէ՝ 78րդ հետեւակ զօրախմբի զօրավար Լիսովսկին սխալմամբ սպաննած են։ Յեղափոխական կազմակերպութիւնը այս իմացնելով Բրոզորովսքիի, աւելցուցած է թէ՝ այս գործուած սխալը ուղղելու համար պէտք է որ ինքն ալ սպաննուի։

— Բեթերսպուրկէն կը հեռագրեն թէ՝ ոստիկանութիւնը ցարին դէմ նիւթուած նոր դաւադրութիւն մը երեւան հանած է։ Ցարսքօէ սէլօին մէջ շատ մարդիկ կան ձերբակալուած, պահակաջորքը կրկնապատուած է։

— Ոստիկանութիւնը յեղափոխականներու մէկ ծրագիրը ձեռք անցուցած է, որմէ կը տեսնուի թէ Մոսքվայի Կրէմլը օդը հանել կը պատրաստուին եղեր։ Կառավարիչին պալատին տակ ական մը գտնուեր է ուժանակով լեցուած նաև ելեքտրական մեքենայ մը զետեղուած։

— Բեթերսպուրկէն կիմացնեն թէ Կոմէլ քաղաքը բոցերու մէջ է։ Քանի մը օրէ իվեր փողոցներու մէջ հրացանաձգութիւններ կըլլան։ Շատ վիրաւոր և մեռած կայ։

— Գուլթախսը որ ժամանակէ մը իվեր կը գտնուէր յեղափոխականներու ձեռքը, ամսոյս 13 ին անձնատուր ըլլալով զինուորական դրութեան ենթարկուած է։

— Գվիրիլի մէջ, ուր յեղափոխականները կողոպտած էին պետական գանձը, ժողովուրդը սկսած է զինաթափ ըլլալ։ Ընդհանուր կառավարիչ Ալիխանով հոս հասած է։

— Կըսուի թէ Կովկասի կառավարիչը մասնաւոր ճիգ կը թափէր, խաղաղացնելու համար Անդրկովկասի այն մասը որ կը գտնուի Թիֆլիզի և Սեւ ծովի միջեւ և մանաւանդ Իմէրէդը և Մինկրէլիան։

Վերջին լուրերէ կիմանանք թէ՝ այս նպատակով զրկուած զօրախումբ Գուրիի մէջ շրջապատուած և գերի ինկած է։

Զօրավար Ալիխանով. Գուդաիսի կառավարիչը Գվիրիլի մէջ, Գուրիացիներու և Մինկրէլներու դէմ, կատաղի կռիւ մղել սարքուեր է, բայց յաջողած է վերջապէս Գուլթախս մտնել։

— Սոխումի՞ կառավարիչը կը հեռագրէ թէ՝ յեղափոխականները թղթատարական գործադուլը սկսելու ատեն ուղեր են գրաւել պետական գանձը և ժամանակեայ կառավարութիւն հաստատել։ Բայց Շիրենց ջանքերը ապարդիւն մնալով, իրենցմէ շատերը ձերբակալուեր են։

— Բեթերսպուրկէն կը հաղորդեն թէ՝ Կովկասի կառավարիչէն ստացուած վերջին հեռագիրներու համաձայն, զինուորական գործառնութիւնները հոն վերջին աստիճան դժուարութիւններու կը հանդիպին։ Յեղափոխականներու լաւ զինուած ըլլալուն պատճառաւ։

Կովկասի փոխարքան այս ամենը ծանուցանելով Բեթերսպուրկի դահլիճին, խնդրած է անպայման և անմիջապէս 10 հազար ձիաւոր զօրք ուղարկել Կովկաս։

Կովկասի մէջ երթալով յեղափոխութիւնը սուր կերպարանք կառնէ։ Յեղափոխականները զինուորական կառախմբերը կը ռմբակոծեն։

— Բեթերսպուրկէն՝ կիմացնեն թէ՝ Կովկասի մէջ յեղափոխութիւնը երթալով մեծ ծաւալ կառնէ, այս պատճառով Սեւ ծովեան նաւատորմիղը՝ զինաւորուելու է պաշարելու համար Կովկասեան ծովափունքը, որպէսզի հրազէնի մուտքը կարելի ըլլայ արգիլել բոլորովին։

ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Թէհրանի մէջ օրէնսդրական ժողովի մը ստեղծագործումը, և Սահմանադրական գաղափարներու արտացոլացումը կը ծանուցանեն։

Պարսկաստանի մէջ այս սահմանադրական գաղափարներու ծաւալումը՝ Եըլտըզի գետնափոր ին և զանի շրջապատողներուն մեծ մատանջութիւն կը պատճառէ։

Սուլթանի կառավարութիւնը, նոր նոր խոչնդոտներ կը հանէ չեկոք երկրաբաժնի խնդրի մասին։

ԲԱԶՄԱՎԷՊ

ՀԱՆԴԻՍԱՐԱՆ

ԱՄՍԱԳԻՐ

Գրական. Բանասիրական. Պատմական. Կրթական և Գիտական

63 րդ. ՏԱՐԻ

Հատոր ԿԳ.

Տարեկան Բաժնեգինն է 10 Ֆր.

Դիմել՝ Բէտաքսիօն տը լա Բրվիւ Զմ. Վէրպ Ս. Լազար Վիէնիս

ՆՈՐ

«ԳԵՂՈՒՆԻ»Ն

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

—o—

Նախորդներէն աւելի Ճոխ պարունակութեամբ լոյս տեսած է Նոր «Գեղունին» կը պարունակէ 100էն աւելի գեղատիպ դասական պատկերներ գերազանցօրէն յաջող է տպագրութիւնը, հիանալի են բազմագունի պատկերներն։ Պատկերազարդ թերթէ մը թէեւ չի պահանջուիր գրական գնահատելի պարունակութիւն մը, սակայն խմբագրութիւնը «Գեղունիի» այս բաժինին հարկ եղած ջանքը խնայած չէ. ներքին եւ արտաքին յօդուածագիրներ ունին հետաքրքրական գրուածներ։

Գինն է 10 ֆրանկ, 4 ռուբլի, 2 տոլար։

Դիմել

Իմբոխմէրի Արտհնիհն

Ս. Լազար Վիէննա (Իտալի)

1887 Ի. ՏԱՐԻ 1906

ՀԱՆԴԷՍ ԱՄՍՕՐԵՍՑ

Ուսումնասիրիչ

Կը մտնէ իւր գոյութեան քսաներորդ տարեշրջանը, և կը շարունակուի իւր ծանօթ ուղղութեամբն և ծրագրով։ «Հանդէս Ամսօրեայ» իբրեւ Հայագիտութեան հանդէս՝ պիտի բովանդակէ հայ գրականութեան, մատենագրութեան, բանասիրութեան, լեզուաբանութեան, հնախօսութեան, աշխարհագրութեան պատմութեան վերաբերեալ քննադատական ուսումնասիրութիւններ—ինքնագիր և թարգմանածոյ։ Զանց պիտի չառնուին հայ ականաւոր ու գրագէտ անձնաւորութեանց կենսագրութիւնները։ Նոյնպէս քննադատական տեղեկութիւն պիտի տրուի ազգային կարեւոր լրերու, նոր հրատարակութեանց եւն.—Տարեկան բաժնեգինն է 10 ֆր. 4 ռբլ. կանխիկ։ Խմբագրութեան հասցէն «Ա. լա Բէտաքսիօն տը լա Բրվիւ Հանդէս» Վիէննա (Օդրիշ) Է./2 Մխիթարեանց 4

Печатница на П. Глушковъ С-неВарн